ԱՐՇԱԼՈՒՅՍ ԼԵՒԱՆԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. թղթադրմ.

Ուրիշ ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Է ՏԱՐԻ ԹԻԻ 67

1892 ԱՊՐԻԼ 9

1892 ՄԱՐՏ 28 (Հ. Տ.)

ՅԱՌԱՋ

Խմբագրութիւնը կ'ընդունի ամէն տեսակ հարցումներ, որոնք կը վերաբերին լրագրի նիւթերուն։

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համաձայնելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Մանուցումներ կ'ընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուներով։

Մանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑԵՐ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

Ա.

Հայերը իրենց Մայր-Հայրենիքի մէջ անխառն բնակութիւններ չեն կազմեր. ցեղով, կրօնով, լեզուով, քաղաքակրթութիւնով տարբեր բազմաթիւ ժողովուրդներ՝ զանազան գծերով կտրատած են հայ բնակութիւնները։ 20է աւելի անկոչ օտարականներ՝ Թիւրքը, Թաթարը, Թիւրքմանը, Աւշարը, Չէրքէզը, Լազը, Քիւրդը, Դղլպաշը, Տըմլիկը, Զազան, Պարսիկը, Զինկեանէն, Գնչուն, Եէզիտին, Ասորին, Քաղդէացին, Վրացին, Գոյնը իրենց ուրիշ ստորաբաժանումներով, խառն կապրին Հայերի հետ միեւնոյն հողի վրայ։

Չնայելով որ այդ օտար տարրերը առանձին առանձին փոքրամասնութիւն մ'են ընդհանուր հայ ժողովրդի թուին համեմատութեամբ և բոլորը մէկտեղ առնելով միայն կրնան հայ ժողովրդի հետ կէս առ կէս կազմել, սակայն զանոնք սփռուած գտնելով Հայաստանի ամէն խորշ, չենք կրնար զանոնք անտես առնել և առաջուց չորոշել անոնց հետ մեր լինելիք յարաբերութիւնը։

Այդ խառն բնակութիւն Հայաստանի լինքնավարութեան գործին ամենէն բարդ կերպարանք կուտայ և հայ գործիչին կըստիպէ երկրին տեղական հանգամանքներն աւելի խոր քննել, իր գործողութիւնները միշտ յարմարցնել և ոչ թէ թեթեւ և պարզամիտ հետեւողութեամբ փորձել անխտիր այն ամէն միջոցները որոնք ուրիշ երկրի և ուրիշ ժողովրդի ազատագրութեան համար օգտակար եղած կրնան լինել։

Հայաստանի մէջ այդ նորեկ ազգերէն դրէթէ ոչ մին Հայի հետ քաղաքակրթութեան միեւնոյն աստիճանի վրայ կը գտնուի։ Քրիստոնէական նեղոշամուտութեան և խաղաղասիրութեան մէջ թրծուած Հայը, աննեղոշ և հանդարտ ոգիով մեծցող մահմետականներն քով՝ կապրի. արհեստով, աշխատութեամբ երկիրը կենդանացնող, քրտինք թափելու վարժուած մի ժողովուրդ՝ ծայր յափշտակութեան վարժ և դարերէ ի վեր ուրիշի հաշուով ապրող լեռնականներուն, թափառիկ ցեղերի մօտ. աշխարհակալութեան ձգտող Հայը՝ խարական ծայրայեղ կրթութիւն ստացած Պարսկին, Հրեային և Ցոյնին դրացի. քաղաքակրթութեան ամէն նորութեան սիրահար Հայը՝ լեռներու մէջ փակուած, նորութենէ խրտչող Ասորի, Տըմլիկ, Դղլպաշ, Եէզիտի ժողովուրդին հետ և վերջապէս եւրոպական բազմատեսակ դրականութիւնը իւրացնելու կարող մի լեզու խօսող ժողովուրդը այնպիսի ցեղերի կից՝ որոնց լեզուի բառերը հովուական ազգի բառերէն աւելին չեն կազմեր և որոց մտաւորական գանձը յափշտակութեան և վայրագ սիրոյ ներշնչած մի քանի բանաստեղծական թոթովումներէ կը բաղկանայ։

Գործերի այս դրութեան մէջ զանազան խնդիրներ կը ծագին որոնց հիմնաւոր և խելացի լուծումէն կախում կունենայ Հայաստանի համար գործել ուզողների կազմած ծրագրի օգտակար և գործադրական լինելը և ընդհակառակն, այդ խնդիրներուն հարեւանցի և սխալ լուծումը առաջ պիտի բերէ ժամանակի կորուստ, թշնամու չահերի անդիտակցօրէն ծառայութիւն, յուսահատութիւն, ոյժի սպառում և աղէտ։

Այդ խնդիրներէ մի քանի գլխաւորներ այստեղ կը դնենք։

Առաջին. Արդեօք այդ զանազան աստիճանի զարգացած ցեղերին կըբնա՞ն յարմարիլ քաղաքական և տնտեսական միեւնոյն օրէնքներ ու հաստատութիւններ կամ միեւնոյն բարեկարգութիւններ. ինքնավարութիւն, կարծիքի ազատութիւն, հանրային քուէարկութիւն եայլն որոնց այժմէն պատրաստ կը գտնենք հայ ազգը։ Արդեօք վիճակի այդպիսի մի հիմնական փոփոխութեան այժմէն պատրա՞ստ են միւս բոլոր ցեղերը. Քիւրդը, Թիւրքը, Չէրքէզը եայլն կրնա՞ն և պէտք կղզա՞ն այժմ երեսփոխանական ժողովներով կառավարուելու կամ ոմանց վախէն համեմատ, ընդարձակ ռամկավարական ազատութիւններ վայելելու, կրօնի և քաղաքականութեան մասին ազատ կարծիքներ յայտնելու, Մարգարէին պատուէրները քննադատելու և Քրիստոնէի հետ հաւասարութեան միեւնոյն հողի վրայ կանգնելու, ուրանալով իսլամ կրօնի հիմնական սկզբունքները։

Երկրորդ. Այդ ազգերը կամ անոնց մի քանին կրնա՞ն Հայաստանի ազատութեան գործին աջակցիլ այժմէն։ Տևրող ցեղի հասարակ ընտանեաց դասակարգին վրայ կարելի՞ է յոյս դնել և թէ հպատակ միւս ցեղերի վրայ կարելի՞ է հաշիւ ընել և ո՞ր աստիճան և թէ հարստահարուած և մեզ վիճակակից ցեղերը Հայի հետ միեւնոյն շարժառիթով և իդէալով կրնա՞ն ոգեւորուիլ, մէկ է՞ իրենց հասկացողութիւն յեղափոխութեան գործի մասին. մէկ խօսքով ամբողջը ապրստամբեցնելու միջոցները և ժամանակը միեւնո՞յնն են թէ՛ Հայի և թէ՛ միւս ճնշուած ժողովուրդներուն մէջ։

Եւ թէ արդեօ՞ք գործի սահմանին չափազանց ընդլայնում և ուժի կանխահաս վատնում չէ՞ հայ-յեղափոխական գործին համար հատաքուած, կամբուած դեռ շատ փոքր ոյժը — մարդ և դրամ — գործածել այժմէն նաեւ այդ չրջակայ ազգերի մէջ յեղափոխական գաղափարներ սերմանելու և կազմակերպելու, մինչդեռ Հայի մէջ իսկ այդ գործ տակաւին մանկական վիճակի մէջ է։

Այս հարցումներուն պատասխանները նոյն իսկ իրենց մէջ են. բայց աւելորդ չենք համարիր յայտնել մի քանի յօդուածներով այդ պատասխանները աւելի ընդլայնել, ընթերցողներին դիւրութիւն տալու համար խնդիրը աւելի բազմակողմանի քննելու և ինքնին անելու իրենց եզրակացութիւնները։

Մ. Ա.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Այն եպիսկոպոսները, որոնք ժողովրդի կամքը չեն բարձրանար Հայ ազգի բարձրագոյն Ալթոռը, կը դանեն իրենց դատապարտութիւն աստուածային ձայնով մեր աննման Հօր Ս. Սահակայ ազգագոյ դարեր դուշակող երազին մէջ։ Անոր մէջ առ

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած նամակագրեն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ընտրելու և ուղղակի կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամէն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին ոյժ գոյացնել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նկատի պէտս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագի՞ր, բայց զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուղէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ Հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Տանօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը հպատակի Ամերիկա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայեր եւ իրենց դրացիները. — կաթողիկոսական խնդիր. — Ակնարկ ռուս քաղաքականութեան վրայ. — Թիւրքիոյ Հայերի կաթողիկոսական պատգամաւորները. — Կանոնք ի նրահանգութիւն վասն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին Ամենայն Հայոց. — Հայեր ի Թիւրքիա. — Հայեր ի Ռուսիա. — Հայեր ի Ռումանիա. — Թիւրքիոյ լուրեր. — Գիւնեգործութիւնը Այնրապի մէջ. — Օսմանեան եմուտք. — Պուլկարական գործեր. — Պարսկական լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Խայտառակ բերդը. — Ծանուցումներ։

Ղազարայ Փարպեցւոյ (էջ 95) կըկարդանք. «Եւ զի երեւեցաւ ի միջոյ կողմն մագաղաթին՝ հեռի յոսկեգիր կարգացն՝ կարդաք ինչ խանդարեալք և ջնջադիրք, դիտեա՛ զի նատելոց են քահանայապետաբար ոմանք յաթոռ Սբրբոյն Գրիգորի, որ ոչ ըստ հրամանի սրբոյ Առաքելոյն և ոչ ըստ կանոնի պատուական Ս. Ժողովոյն 318ից լինին ձեռնադրեալք յերկնաւոր պաշտօնն, այլ ըստ փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն յանդգնութեամբ, որք են արծաթասէրք առաւել քան Աստուածասէրք։»

Հայ ազգը իւր կարքով հաստատուած կաթուղիկոսացուին, եթէ նոյն իսկ անարժան դուրս կը գար, չէր վրանները յարգել պնա. սակայն Պարսից բռնի հաստատածներին դեռ ևս դարում կը խորշէր մինչեւ անգամ Հայ անուն մը տալ և տարերէն անուամբ կոչեց անոնց — Սուրմակ, Շմուէլ, Բլբլչօ։ Օտարի կամք Ս. Էջմիածնի աստուածային աթոռը բազմող անձին վրայ կը գոչէ նոյն աստուածային ձայն. «Եւ վասն զի խոտան և օտար է քահանայապետութիւնն և ոչ ըստ հաճոյից Բարձրելոյն, ջնջեալ են նոքա ի դպրութենէ երկնից բարութենէն, տալով դատաստան դեհենին այրմամբ զանձանց և զժողովրդեանն կորստեան։»

ԲՈՒԻ

ԱԿՆԱՐԿ ՌՈՒՍԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Շատ ճշմարտութիւններ սպասում ենք մենք արտասահմանի լրագիրներից լսելու, սակայն շատեր կարելի է միայն բուն Ռուսիայում ապրելով իմանալ։ Սոսկալի սուի, կայսեր դէմ ամենայն օր երեւան եկող դաւադրութեանց մասին չպիտի խօսենք. այլ Ռուսաց արտաքին քաղաքականութեան վրայ։ Այդ պիտի մեզ զբաղեցնէ, քանի որ Ռուսաց լնտրիդանները Բալքանից սկսած մինչեւ Սպանիա են տարածուած։ Սակայն միայն մի ակնարկ պիտի ձգենք։

Ալգանիստանի Էմիրը թշնամի մըներս Ռուսաց. ոչ մի աշխատանք չխորշացաւ նորան դրաւել։ Նորերս Ռուները մարդ էին ուղարկել նորա մօտ և յայտնել որ մտադիր են սահմանի վրայ 600 հոգեկներով վարժութիւն կատարել։ Էմիրը ոչ մի դժգոհութիւն չյայտնելով, պատասխանում է. «Այո՛, հէնց ես էլ երեկ հրամայել եմ որ 3,000 ձիաւորներով վարժութիւն անեն սահմանի վրայ»։ Չի՛ զարմանալ ընթերցողը, որ Ռուները իրենց վարժութիւնը սահմանից շատ հեռու կատարեցին։

Թէ Ռուները առաջ ինչ դիրք էին բռնել Թիւրքիայի նկատմամբ, այդ յայտնի է, որ չյաջողուեց։ Կոլկասի Հայոց առանձնաշնորհումները տալով, չկարողացան Թիւրքիայի Հայոց ապստամբեցնել։ Այժմ նոր ճանապարհ են բռնել։ Գիտենք թէ ինչ դիրքի է Ռուսիան Լեհերի նկատմամբ. երբ Ռուները Գերմանացիների հետ հաշտ էին, Լեհերի դրութիւնը սոսկալի էր։ Բայց այժմ թշնամացան և ահա Ռուները մինչդեռ չարունակում են ճնշել Լեհերին, Գերմանացիները կատարեալ աղատութիւն են տալիս նոցա։ Լսում ենք որ մի Լեհացի Թերթ մի մի ընծայ էր խոստացել այն բոլոր Լեհացի մանուկներին, որոնք մի մի լեհերէն նամակ գրեն խմբագրութեան. ասում են որ կարճ միջոցում մօտ 500 նամակներ է ստացել, որոնցից ոմանք հրատարակուեցան։ Այսպէս մէկը գրած պիտի լինի. «Թող Գերմանացոց կայսրը թոյլ տայ մեր կրօնը ազատ պաշտել և մեր լեզուն ազատ սովորել, այն ժամանակ ես նորա ամենահաւատարիմ հպատակը կը լինեմ և նորա թշնամու դէմ երթելով, կը մեռնեմ նորա համար»։ Որչափ Լեհերը բաղդատուր են համարում իրենց, նոյնքան ուրախ է Վիլհելմ կայսրը։ Ոտաց կատաղութեան չափ չկայ, ինչպէս տեսնում ենք «Սուէա» և այլ լրագրների դրածներից։

Գերմանացիների այս քաղաքականութիւնը ճիշդ պահպանում է և Պարսից խոհեմ կառավարութիւնը Հայերի նկատմամբ, և քանի որ Պարսից կառավարութեան անողոք թշնամին, Շահի դահի տակը գաղտնապէս քանդողն է Ռուսիան, համոզուած ենք որ Հայերը ամենայն սիրով և հաւատարմութեամբ կը գործեն յօգուտ և ի բարգաւաճանս այդ մարդասէր կառավարութեան, Շահի բարի և ի մտաստն գործունէութեան։

Նայենք Թիւրքիայի վրայ. ի՞նչ ենք տեսնում։ Ամէն օր ծրագիրներ են որ գնում են Կ. Պոլսի դեսպանատունը, չանալով կատաղութիւն ներշնչել Սուլթանին դէպի Հայերը։ Միակ չանքն է Ռուսաց, դրդել Սուլթանին չնչելու Հայոց, նեղելու, ոչ մի ազատութիւն չտալու, տուածներն էլ խլելու, որպէս զի վերջ ի վերջոյ երկրի միջից ապստամբութեան մի խիստ կրակ վառուի, տարածուի և ուրախանայ Ռուսիային, նորա ակնկալութեան նպաստելով և ճանապարհ բանալով։ Թող Կ. Պոլսի Հայերը աչքարաց լինեն և նային Ռաց դեսպանի դործունէութեան. մեծ խելքի պէտք չկայ իսկոյն հասկնալու համար որ, իրենց բաղդատուրութեան տակը քանդողը Ռաց լնտրիդաններն են, իրենց վրայ կասկածները Սուլթանի առաջ բաղնապատկողը նոյն այդ կողմից եկած քամիներն են։

ՍՈՒՐ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՑԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Ռուսահոգի Առաջնորդ Գեր. Հայրմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան պատրաստականութիւն յայտնած է անձամբ երթալ Էջմիածին, մասնակցելու համար կաթողիկոսական ընտրութեան։ Ռուսահոգի Գաւառ. Ընդհ. ժողովը գումարուելով մարտ 15/27ին, իր կողմէ աշխարհական պատգամաւոր ընտրած է Մեծ. Տիար Յակոբ Պօյաճեան Ռուսահոգի որ Կ. Պոլսի մէջ չափական դիտութիւնների ուսուցչութեան պաշտօն կը վարէ պետական և աղգային մի քանի վարժարանների մէջ։

Կեսարիայի Առաջնորդ Գեր. Տէր-Դաւիթ Ծ. Վ. Պալեան անձամբ կերթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Գաւառական Ընդհ. ժողովէն նոյն ժողովին Ատենապետ Մեծ. Տիար Համբարձում Մոստիչեան։

Եղեսիոյ վիճակին Առաջնորդ Գեր. Թորգն եպիսկոպոս Մխիթարեան՝ կը կարծուի ինք անձամբ երթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Ցարուքիւն Արծրունի։

Արմենիայի 62րդ թուով հրատարակած ենք արդէն թէ Տրապիզոնէն աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Շահրիկեան. այժմ կիմանանք որ Տրապիզոնի Պարբարքական փոխանորդ Գեր. Արիստակէս վ. Տէր-Սարգսեանց անձամբ պիտի երթայ Էջմիածին ընտրութեան մասնակցելու։

ԿԱՆՈՆՔ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻԻՆ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

(Շար. 66ղ բուհ.)

ԳԼՈՒԽ Դ.

Ցաղագս կարգին պարապմանց ժողովոյն

Յօդ. 11. Ի նշանակեալ աւուրն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսին՝ պատգամաւորքն ժողովին յինեներորդում ժամու առաւօտեան պահու ի վեհարանն կաթուղիկոսական, ուրանօր ցուցանեն նոցա ընդունելութիւն աւագագոյն եպիսկոպոսս Տաճարին Էջմիածնի և միւս անդամք Սիւնհոդոսին, զոգ ընդ սմին աւագագոյն եպիսկոպոսն հրաւիրէ զժողովականսն գնալ յեկեղեցին ի լուր Սրբոյ Պատարագի և գոհացողական մաղթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց Նորին կայսերական Մեծութեան և բոլոր Օգոստափառ տան Նորա յաղագս երդումն տալոյ աշխարհական պատգամաւորացն վասն պահպանելոյ զկարգն և զանաչառութիւն յառաջիկայ գործն։

Ծանօթութիւն. — Հոգեւորականքն ոչ երդնուն, այնու դիտաւորութեամբ, թէ պարտին նոքա կատարել զայնոսիկ կանոնս համաձայն սրբազան կոչման իւրեանց։

Յօդ. 12. Ընթացք ի Տաճարն կարգին սովին եղանակաւ։ Առաջի բոլոր հանդիսին գնայ կատարող պաշտաման կաթուղիկոսին (Նախագահ անդամ Սիւնհոդոսին)։ Զկնի որոյ պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմայ և Կոստանդնուպօլսոյ. զկնի նոցա չուխտակ գնան յալ կողմն կոյս՝ անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղւոյն, ընթացակցեալ Պրօկուրօրի Սիւնհոդոսին. իսկ ի ձախակողմն թեմակալ Առաջնորդք կամ պատգամաւորք նոցա նոյնպէս չուխտակ կարգաւ ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրաքանչիւրոց ի նոցանէ. և ապա աշխարհական պատգամաւորքն նովին իսկ կարգաւն ըստ աւագութեան քաղաքացն։ Եւ վերջապէս զընթացս գնացիցն եզրափակէ աւետնադպրն Սիւնհոդոսի Էջմիածնի։

Ծանօթութիւն. — Ի դէպս անբարեյաջող եղանակի փոխարկի այս հանդէս ընթացից, և պատգամաւորքն ըստ հրամանաց աւագագոյն եպիսկոպոսին և Պրօկուրօրի Սիւնհոդոսին Էջմիածնի գնան ի կաթուղիկոսական վեհարանն յեկեղեցին առանց պահպանելոյ զծէսն վերոգրեալ։

Յօդ. 13. Զպատարագն Սուրբ և զդոհացողական մաղթանս մատուցանէ հանդիսաւոր Ծ. Վ. Պալեան անձամբ կերթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Գաւառական Ընդհ. ժողովէն նոյն ժողովին Ատենապետ Մեծ. Տիար Համբարձում Մոստիչեան։

Եղեսիոյ վիճակին Առաջնորդ Գեր. Թորգն եպիսկոպոս Մխիթարեան՝ կը կարծուի ինք անձամբ երթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Ցարուքիւն Արծրունի։

Արմենիայի 62րդ թուով հրատարակած ենք արդէն թէ Տրապիզոնէն աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Շահրիկեան. այժմ կիմանանք որ Տրապիզոնի Պարբարքական փոխանորդ Գեր. Արիստակէս վ. Տէր-Սարգսեանց անձամբ պիտի երթայ Էջմիածին ընտրութեան մասնակցելու։

ԿԱՆՈՆՔ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻԻՆ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

(Շար. 66ղ բուհ.)

ԳԼՈՒԽ Դ.

Ցաղագս կարգին պարապմանց ժողովոյն

Յօդ. 11. Ի նշանակեալ աւուրն ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսին՝ պատգամաւորքն ժողովին յինեներորդում ժամու առաւօտեան պահու ի վեհարանն կաթուղիկոսական, ուրանօր ցուցանեն նոցա ընդունելութիւն աւագագոյն եպիսկոպոս Տաճարին Էջմիածնի և միւս անդամք Սիւնհոդոսին, զոգ ընդ սմին աւագագոյն եպիսկոպոսն հրաւիրէ զժողովականսն գնալ յեկեղեցին ի լուր Սրբոյ Պատարագի և գոհացողական մաղթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց Նորին կայսերական Մեծութեան և բոլոր Օգոստափառ տան Նորա յաղագս երդումն տալոյ աշխարհական պատգամաւորացն վասն պահպանելոյ զկարգն և զանաչառութիւն յառաջիկայ գործն։

Ծանօթութիւն. — Հոգեւորականքն ոչ երդնուն, այնու դիտաւորութեամբ, թէ պարտին նոքա կատարել զայնոսիկ կանոնս համաձայն սրբազան կոչման իւրեանց։

Յօդ. 12. Ընթացք ի Տաճարն կարգին սովին եղանակաւ։ Առաջի բոլոր հանդիսին գնայ կատարող պաշտաման Կաթուղիկոսին (Նախագահ անդամ Սիւնհոդոսին)։ Զկնի որոյ պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմայ և Կոստանդնուպօլսոյ. զկնի նոցա չուխտակ գնան յալ կողմն կոյս՝ անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղւոյն, ընթացակցեալ Պրօկուրօրի Սիւնհոդոսին. իսկ ի ձախակողմն թեմակալ Առաջնորդք կամ պատգամաւորք նոցա նոյնպէս չուխտակ կարգաւ ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրաքանչիւրոց ի նոցանէ. և ապա աշխարհական պատգամաւորքն նովին իսկ կարգաւն ըստ աւագութեան քաղաքացն։ Եւ վերջապէս զընթացս գնացիցն եզրափակէ աւետնադպրն Սիւնհոդոսի Էջմիածնի։

Ծանօթութիւն. — Ի դէպս անբարեյաջող եղանակի փոխարկի այս հանդէս ընթացից, և պատգամաւորքն ըստ հրամանաց աւագագոյն եպիսկոպոսին և Պրօկուրօրի Սիւնհոդոսին Էջմիածնի գնան ի կաթուղիկոսական վեհարանն յեկեղեցին առանց պահպանելոյ զծէսն վերոգրեալ։

Յօդ. 13. Զպատարագն Սուրբ և զդոհացողական մաղթանս մատուցանէ հանդիսաւոր Ծ. Վ. Պալեան անձամբ կերթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Գաւառական Ընդհ. ժողովէն նոյն ժողովին Ատենապետ Մեծ. Տիար Համբարձում Մոստիչեան։

Եղեսիոյ վիճակին Առաջնորդ Գեր. Թորգն եպիսկոպոս Մխիթարեան՝ կը կարծուի ինք անձամբ երթայ Էջմիածին. իսկ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Ցարուքիւն Արծրունի։

Արմենիայի 62րդ թուով հրատարակած ենք արդէն թէ Տրապիզոնէն աշխարհական պատգամաւոր ընտրուած է Տիար Շահրիկեան. այժմ կիմանանք որ Տրապիզոնի Պարբարքական փոխանորդ Գեր. Արիստակէս վ. Տէր-Սարգսեանց անձամբ պիտի երթայ Էջմիածին ընտրութեան մասնակցելու։

Դիսիս աւագագոյն եպիսկոպոսն Էջմիածնի. իսկ ի վախճան Սրբոյ Պատարագի և գոհացողական մաղթանացն վասն երկարութեան կենաց Նորին կայսերական Մեծութեան և համայն օգոստափառ տոհմին Նորա, աւագագոյն եպիսկոպոսն յերդումն ածէ զամենայն առաջիկայ աշխարհական պատգամաւորս ըստ սահմանեալ ձեւոյն։ Ամենեքեան երդուեալքն ստորագրեն զանուանս իւրեանց ի վերայ երդմնաթղթոյն (1)։

Յօդ. 14. Ի միւսում աւուր զկնի կատարման այսր ծիսի ամենայն առաջիկայ եղեալքն և որոց են իրաւունք ընտրութեան Պատրիարք կաթուղիկոսին ընդունին զտեղիս չուրջ զեղեալ առաջի սեղանոյ Իջման Որդւոյն Միածնի գրասեղանին, (յօդ. 9,)։ Զմիջին տեղին գրասեղանին ընդունի կատարողն պաշտաման կաթուղիկոսին. յաջակողմն կոյս պատգամաւորքն երկուց Պատրիարքաց, և բոլոր հոգեւորականքն, որոց են իրաւունք ընտրութեան Պատրիարք կաթուղիկոսին ըստ աւանդութեան ձեռնադրութեան նոցա, իսկ ի ձախակողմն կոյս պատգամաւորքն աշխարհական ըստ աւագութեան կոչման իւրաքանչիւրոցն ի նոցանէ։

Ծանօթութիւն. — Հոգեւորականքն՝ որք ունին իրաւունս նստելոյ ի Տաճարին ըստ ծիսից հաւատոյ իւրեանց պահպանեն զայնոսիկ իրաւունս և յայս նուագ. իսկ այլ միւսքն առնեն զընտրութիւնն կանգուն կացեալ զսեղանւոյն։

Յօդ. 15. Նախ քան զամենայն երիցագոյնն ի հոգեւոր աստիճանաւորաց գործակցութեամբ երկուց աւագ սարկաւագաց ընթեռնու զաղօթս սահմանեալս վասն այսորիկ ըստ ծիսի Հայոց Լուսաւորչեան եկեղեցւոյ, հուսկ ապա նոյն իսկ հոգեւոր աստիճանաւորն արտասանէ զլատչաճաւոր առաջիկայ ընտրութեանն գրան, յորում յանդիման կացուցանելով ժողովականացն ըզծանրութիւն գործոյն՝ առ որ գումարեալ են՝ զվճռս եկեղեցւոյ և զայն բարօրութիւն, որում ակն ունի եկեղեցին

(1) ՕՐԻՆԱԿ ԵՐԴՄԱՆ. — «Ես ի ներքոյ անուանեալս խոստանամ և երդնում յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի Սրբոյ Աւետարանի Նորա առ այն թէ ցանկամ և պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսի Ամենայն Հայոց վասն գլխաւոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց և ծայրագոյն տեսչութեան եկեղեցականաց Նորին ըստ մաքուր խղճի մտաց և պատուոյս առանց իրիք աչառութեան և սեփական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մոլանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ կապս մերձաւորութեան և բարեկամութեան՝ ընտրել ի միջոյ հոգեւորականաց հայրենի եկեղեցւոյ իմոյ զայնպիսի անձն, զոր և ըստ բարեմասնութեանց հանճարոյն և խղճի մտացն առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիմ ես և յորմէ ակն ունիմ զի նա ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զոր դնէ ի վերայ նորա այս վեհ աստիճան հոգեւոր, հանդիսացուսցէ զինքըն ներմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի եկեղեցւոյն Քրիստոսի և յանձն եղեալ Հայրապետական իշխանութեան նորա բանաւոր հօտին Քրիստոսի։ Իսկ եթէ այլազգ ընթացայ, յայնժամ իրրեւ անհոգ ումն օգտին եկեղեցւոյ և ճշմարիտ օրդւոց այնորիկ յորում կայանայ և սեփական օգուտն իմ, ենթադրեմ զանձնս մեղադրանաց եղբայրակցաց իմոց, իսկ ի հանդերձելումն՝ պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի Նորա, ի վախճան երդմանս վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զՔանս և զխաչ Քրիստոսի իմոյ. ամէն։»

յընտրութենէ առտի արժանաւորագոյն Գլխոյ իւրոյ, հրաւիրէ զժողովականն, զի նոքա ի բացեայ ուննելով զամենայն վճռաւակար կուսակից աչառանաս, նկրտեսցեն առ այն միայն նպատակ, զի ընտրեալ Գլուխն Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտպանեսցէ զամենայն արժանաւորութիւնս կցորդս այսմ վեհ աստիճանի Նորա, այնու ճշմարիտ և իրաւացի դիտաւորութեամբ, զի յարժանաւորագոյն ընտրութենէ աստի Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին Ամենայն Հայոց կախեալ կայ ապագայ բարօրութիւն նոյն եկեղեցւոյ և կաթուղիկոսական Ամենայն Հայոց Աթոռոյն Էջմիածնի։ Հուսկ ուրեմն Պրօ-կուրօր Սիւնհոդոսին Էջմիածնի ընթեռնու զառաջադրութիւն գլխաւոր կառավարչին յայսկոյս Կովկասու կողմանց ի մասին բացման ժողովոյն, և ժողովականք ձեռն արկանեն յընտրութիւն աւագագոյն կանոնիդատացն։

Յոգ. 16. Իւրաքանչիւր ոք ի ժողովականացն առաջարկէ զդատողութիւն իւր վասն աւագագոյն կանոնիդատացն ազատօրէն ըստ ուղիղ հասկացողութեան իւրում և ըստ մաքուր խղճի մտացն առանց երիք երկիւղի, և ոչ հայելով բնաւին յոչինչ օտարոտի առաջարկութիւն ինչ և կամ ի մտանաւոր նամակագրութիւնս, թէեւ իցեն այնոքիկ յաւագագունից յազգէն Հայոց։ Ամենայն ոք վարի այնպէս, որպէս զի կարասցէ պատասխանի տալ վասն ամենայնի առաջի Տեառն Աստուծոյ։ Ուստի և իւրաքանչիւր ոք ի բաց հերքելով յինքենէ զամենայն յամառումն կարծեաց կամակորութեան և զանձնական ակնկալութիւնս, չան դնէ տեսանել ի հասարակաց դատողութեան զհաստատուն հիմնաւորութիւն ճշմարտութեան։

(Շարունակելի)

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսեն կը գրեն Արձագանքին հետեւեալը.

Բ. Դուռը հեռագրաւ յայտնած է Էրզրումի կուսակալին չարտօնել այն տեղի Հայերին գաւառական երեսփոխանական ժողով բանալ. ուստի Ս. Պատրիարքը գրաւորապէս յայտնեց Էրզրումի Առաջնորդին, որպէս զի Գաւառական խառն ժողովով ընտրեն Էրզրումի թեմական պատգամաւորը (կաթողիկոսի ընտրութեան համար)։

ՀԱՑԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Թիֆլիսի լրագիրներին մէջ կը կարդանք որ Էջմիածնի Ճեմարանի տեսուչ Գեր. Սարգիս եպիսկոպոս Տ. Գասպարեան հրաժարեր և իր տեղ տեսուչ եղեր է Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան։

— Բագուէն Մշակին գրած են հետեւեալը.

Ամենաճիշդ աղբիւրից խնդայ Գ. Աւետիս Ղուկասեանի կտակի մասին հետեւեալը։

Գ. Ղուկասեան լինելով անզաւակ, իր կնոջ համար թողնում է «Աւետիք» չոգենաւի ընկերութեան կէս մասը, որն արժէ 120,000 րուբլի, կանխիկ դրամով՝ 15,000 րուբլի, Զաքարեան Ճեմարանում երկու թոշակաւորներ պահելու համար 15,000 ր., Շուշու հոգեւոր դպրոցին՝ 5,000 ր., նոյն քաղաքի օրիորդաց դպրոցին՝ 5,000 րուբլի, Բագուում մի նոր եկեղեցի կառուցանելու՝ 30,000 րուբլի, Ղուբայի գաւառում Քիվար թրքա-

խօս գիւղի Հայոց ուսումնարանին՝ 1,000 րուբլի, Բադուի Մարդասիրական ընկերութեան օգտին՝ 20,000 րուբլի, իր երկու քոյրերին ամեն մէկին՝ 4,000 րուբլի, բայց ամենանշանաւոր գումարը, այն է 150,000 րուբլի, Գ. Ղուկասեան կարգադրել է այսպէս. այդ գումարը, որ մուցրած է «Արաֆելեան և ընկերութիւն» կոչուած նաւթային մեծ ընկերութեան մէջ, պէտք է մնայ անձեռնմխելի, մինչեւ նրա գումարը կը հասնի 400 հազար րուբլի քանակութեան. այնուհետեւ այդ գումարի անմիջական կարգադրութեան իրաւունքը թողած է կտակակատարներին միայն այն պայմանով, որ այդ գումարով բացվի մի մեծ դպրոց։

Ծարակցում ենք մեր գոհունակութեան և այն, որ ցանկալի էր ապագայ Ղուկասեան դպրոցը, տեսնել մի նշանաւոր հայկական կենտրոնում. իսկ թէ որտեղ կը լինի այդ, այդ ցոյց կը տայ ապագան։

Հանդիպելով նմանօրինակ կտակների, մենք չենք կարող չը յայտնել մեր զարմանքը, որ մինչեւ այսօր դեռ ոչ մի կտակող, բացի ուսումնարանից և եկեղեցուց, աչքի առաջ չեն ունեցել միւս հասարակական հիմնարկութիւնները։ Բոլորովին աչքաթող է անում օրինակ թատրոնը, որը ամենից շատ կարօտ է մի խոշոր նուիրատուութեան, անտես են առնում հրատարակչական ընկերութիւնը, լրագիրները, գրադարանները։ Ցանկալի էր նոյնպէս աչքի առաջ ունենայ մի որեւէ արհեստագործական դպրոց հայկական կենտրոններից մէկում։

ՀԱՑԵՐ Ի ՌՈՄԱՆԻԱ

Կ. Պոլսի լրագիրներն առնելով հրատարակած էնիք Արմենիահի 61րդ թուին մէջ թէոդարեղին անուն մի քահանայ Կ. Պոլսէն Պուքրէշ գնացած և այնտեղ քահանայագործել սկսած լինելով, Պատրիարքարանէն աղդարարուեր է Պուքրէշի Հոգեւոր վարչութեան որ այդ անձ կարգալոյծ է։ Արդ Պուքրէշէն կը հաղորդեն մեզ թէ ոչ այդպիսի մի անձ կայ այնտեղ և ոչ ալ Պուքրէշի Պատ. Հոդաբարձութեան մի այդպիսի գիր եկած է։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի լրագիրները կը գրեն թէ վանի լճին վրայ չոգենաւ բանեցնելու համար մի ընկերութիւն կազմելու խորհուրդ կայ։ Արդէն այդ նպատակով մի ընկերութիւն կազմուած էր շատ տարիներ առաջ և արտօնութեան firman ալ եղած էր Սուլթանէն. բայց որովհետեւ արտօնատէրներին մէջ Հայեր ալ կային, դեռ գործին չը ձեռնարկած յետ առնուեցաւ firmanը այժմեան Սուլթանի օրով։

— Էրզրումի անգլիական հիւպատոսի Թարգմանի տունը գողեր մըտնելով, շատ արժէքաւոր նիւթեր գողցեր տարեր են։ Ոստիկանութիւնը կը փնտռէ գողերը որոնցմէ 2ը կրցեր է ձեռք անցունել։

— Աւշկերտին կը գրեն թէ տա-

տիկ տեղացած ձիւնին և անձրեւներին պատճառներով, Աւշկերտի մէջ 34 տուն փլեր և 100էն աւելի տուներ ալ փլելու վիճակին հասեր են որոնցմէ մի քանի տնուորներ փախեր գնացեր են ուրիշ տեղեր։ Այս տարի ընդհանրապէս Հայաստանի մէջ սաստիկ եղած է ձմեռը։

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԱՅՆԹԱՓԻ ՄԷՋ

Այնթապի (Կիլիկիա) մէջ ուր այգիները շատ են և առատ խաղող կը լինի, Հայեր կազմած են գինեգործական մի ընկերութիւն որ հրաւէր կը կարդայ գինեգործ վարպետներին՝ որոնք Եւրոպայի մի գինեգործական հաստատութենէ վկայուած լինին, գալ և այդ ընկերութեան տրամադրութեան տակ գործել Այնթապի մէջ։ Այդ ընկերութեան հետ բանակցիլ ուզողները դիմելու են սա հասցէին.

Monsieur Joseph Boyadjian
(Turquie d'Asie) AINTAB

ՕՍՄԱՆԵԱՆ ԵԼՄՈՒԹԻՒՆ

1891 մարտ — 92 փետրուար ելմըտական տարուան մէջ Թիւրքիոյ ամբողջ մուտքն եղած է 17 միլիոն օսմ. ոսկի. իսկ ելքը 16½ միլիոն մնատուրապէս։ Այժմ ուրեմն ½ միլիոն օսմ. լիրայի առաւելութիւն մը կը տեսնուի հասոյթի կողմը և այս կէտ նշանակելի է այն պատճառով մանաւանդ որ Եւրոպայի մեծ ու փոքր պետութիւններն շատերը այժմ ելմտական տագնապի ենթարկուած են և ոմանք ալ անանկութեան մը կը մօտենան։ Օսմ. ելմուտքն այս տարի մէկ ու կէս միլիոն ոսկու բացառիկ մի հասոյթ ունեցեր է եգիպտական տուրքի վրայ եղած ելմտական մի գործողութիւնով. ասել է որ եթէ այդ բացառիկ հասոյթ չը լիներ, իր սովորական մուտք 15 ½ միլիոնի կը հասնէր. միայն թէ Թիւրքիան այս տարի ալ իր ընդհանուր պարտքէն և Ռուսիոյն տալիք պատերազմական տուգանքէն բաւական մի գումար, 2 միլիոն ոսկիէն աւելի, վճարեր է։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ալմանական կազէթ տը Ֆրանքֆորտ թերթը կհամացունէ որ իբր թէ երազեկ մի աղբիւրէ իրեն հաղորդած են ռուս-պուլկար մի ընդարձակ դաւադրութեան յատակագիծը։ Դաւադրութիւնը կազմակերպուած է Օտեսայի մէջ և իւր ճիւղեր ունի տաս ուրիշ քաղաքներ ալ որոնց գլխաւորները են Կ. Պոլիս և Պելկրատ։ Դաւադիրներն որոնք բաղկացած են պուլկարական պուլկարներէ, Ենչեվս և Ռուսերէ, նպատակ ունին պուլկարական ներկայ կառավարութիւնը տապալել, դաւակիցներէն մի ցանցով պատելով բոլոր պուլկարիան։ Այս ընկերութեան դրամական միջոցներն ալ իբր թէ կը հայթայթուին այն դրամէ դոր պուլկար կառավարութիւնը կը վճարէ Ռուսիոյն, ռուսական զօրքերի ժամանակաւորապէս պուլկարիոյ մէջ մնալու ծախքին համար։

— Սոֆիայի մէջ միշտ այն կարծիքն կայ թէ Ռուսիոյ մտադրութիւնն է Ֆօքթ-Վուլքովիչի սպանման գործին մէջ և լուր ալ տարածուած է թէ մարդասպանները նոյն պահուն Վոսկորի մէջ գտնուող ռուսական մի շոգենաւով Օտեսա ապաստանած լինին։ Պուլկար կառավարութիւնը մի ծանուցագիր ուղղելով Բ. Դրան, խիստ կերպով կը գանգատի այն բանի համար որ պուլկար փախստականներն որոնք Պուլկարիոյ դէմ կը դաւադրեն, հիւրընկալութիւն գտած են Թիւրքիոյ մէջ։ Կըսուի նաեւ թէ պուլկար կառավարութիւնը նոյն ծանուցագրով կըպատռնայ նախկին Արեւելեան Րումելիի (այժմ Հարաւային Պուլկարիա) բաժին եղած 4 միլիոն ֆրանքի տուրքն վճարելէ դադրիլ եթէ Բ. Դուռը շարունակէ իր թոյլ ընթացքն։ Շէյխ-ուլ-իսլամ ռուսահպատակ Պուլկարը որ առաջ ձերբակալուած էր իբր սպաննիչ Ֆօքթ. Վուլքովիչի, բայց-ռուս դեսպանի խիստ բողոքին վրայ ազատ արձակուելով Օտեսա գնացեր էր, այժմ վերադարձած է և կըսուի որ դատաստանի ալ պիտի ներկայանայ, միայն թէ ռուս հիւպատոսարանի պահպանութեան ներքեւ։

— Կ. Պոլսէն ապրիլ 6 թուով եկած մի հեռագրի նայելով, Քրիթօ և Գիւրկիյ անունով երկու Պուլկարներ ձերբակալուած են, որոնցմէ մին մարդասպանն կը կարծուի և միւսն՝ մեզսակիցը։

ՊԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ապրիլ 6 թուով Թէհրանէն կը հեռագրեն Թայմսին թէ պարսիկ կառավարութիւնը Բէժիի անգլիական ընկերութեանը հետեւեալ առաջարկները ըրած է ծանօթ դժուարութիւններ վերկելու համար. պարսկական դանձը 500,000 անգլ. լիրա պիտի վճարէ այդ անգլիական ընկերութեան, պայմանով որ սա իր ունեցած բոլոր ապրանք և նիւթեր պարսիկ կառավարութեան յանձնէ. ընկերութիւնը իր իրաւունքներ պիտի պահէ թէմպէքիի և ծխախոտի արտահանութեան մասին և յիշեալ գումարի վճարումը տեղի պիտի ունենայ 4 ամիս պայմանաժամի մէջ։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Եգիպտական գործեր. — Ապրիլ 6 թուով եկած մի հեռագիր կհամացունէ որ Ապպաս փաշան և Ահմէտ Էյուպ փաշան իրար հետ տեսակցութիւններ փոխանակած են։ Նոր Ֆէրմանն եւ պիտական սահմանի մասին փոփոխութիւն մտուցեր է և խտիվական երկիրները կը սահմանէ 1841ի Փետրմանէն ցուցած քարտիզին և 1866ի Փետրմանի աւելցուցած երկիրներին համեմատ Սակայն Տաուան որ 1866ի Փետրմանէն մէջ յիշուած էր, այս նոր Փետրմանի մէջ չէ գրուած իբր եգիպտական առաջուած։

— Սերպ կառավարութիւնն իւր անելիք 30 միլիոն ֆրանքի նոր փոխառութեան մի մասը պիտի յատկացունէ ֆրանսական արագաձիգ գնանի թղթեմանօթներ գնելուն։

— 20 միլիոնի կտակը. Կը յիշուի թէ վերջերս մեծահարուստ յոյն Զաբբա կոնմանթէն որ իր բոլոր հարստութիւն վատակը էր Ռումանիոյ մէջ և Ճուրճեվօ քաղաքն էր իր բնակատեղ, իր հարստութեան խիստ մեծ ծագոյն մասը, 20 միլիոն ֆրանքի մօտ, կտակեր էր յոյն պետութեանն. Այժմ Ռումանիոյ կառավարութիւնը նկատելով որ կտակը լինչ լինչ թերութիւններ ունի ձեւակերպութեան մասին, ուժմէն դատարանների դիմեր է վճռել տալու համար թէ կտակը անվաւեր է։

ԽԱՑՏԱՌԱԿ ԹԵՐԹԸ

Զանազան տեղերէ նամակներ կը տեղան մեզ հերքելու համար խայտառակ թերթին մէջ հրատարակուած այս կամ այն ղրպարտութիւնը։ Մի այդպիսի թերթի պատասխանելը՝ անոր չափազանց պատիւ անել է ըրուելիքեւ, ինչպէս կերեւի, ամեն տեղերէ եկած նամակներէն, նա արդէն իրեն արհեստ արած է հրեչաւոր սուտեր և ղրպարտութիւններ հրատարակել այս կամ այն անձի վրայ, իր անձնական հաշիւներ մաքրելու համար։ Երբ մի պարապ ժամանակ ունենանք, մենք կը պատմենք թէ նա որ դրեթէ մինչեւ 1½ տարի յառաջ Ամերիկահայ գաղափարներուն և ուղղութեանը չերմ պաշտող կը ձեւանար իր մեզ գրած նամակներուն մէջ, ինչպիսի ամենակատարելութիւններէ և գովելի պատճառներէ դրդուած սկսեր է այժմ դէմ դրել Ամերիկահայ խմբագրին. և դէմ դրել ոչ թէ վատաերով կամ դէթ առերեսոյթս լուրջ դատողութիւններով, այլ նորա անձնականի դէմ բացարձակ հայհոյութիւններով և այնպիսի պոչաւոր և բոլորովին չինծու սուտերով և ղրպարտութիւններով որ փոքր ի շատէ դատելու կարողութեան տէր ոեւէ ընթերցող կարող է լմնանալ թէ ինչ արժէք պէտք է տալ այդպիսի ղրպարտութիւններուն։

Թող մեր նամակագիրները ոեւէ նշանակութիւն չտան այդ խայտառակ թերթի գրածներուն և հերքելու նեղութիւն չկրեն որովհետեւ անոր ոչ թէ համակրութեան և գովեստներուն, այլ ղրպարտութիւններուն ենթարկուիլն է որ պատիւ կը բերէ իրենց։ Գրիչները կան որոնցմէ նախատուիլը աւելի պատուաբեր է։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Ամերիկահայ խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՆ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մեկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ։
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներէն սեկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարտեղուց (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԵՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերուն և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բաղդատական մեկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութ ծալ գիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԻԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ — ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւրաքանչիւր գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չըլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորները որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին կ. Պոլիս տպագրուած ազգային երգ արաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արգէն արգիլուած է, և Ասիա և Ամերիկա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաւատօ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով։ Հատին գինն է 15սանթիմ (Պարսկաստանի Հայերին հաժար 10 սանթիմ)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուն։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ
1892
Նահանջ Թուականին

Սեփականութիւն
Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին Հայոց
Կ. ՊՕԼԻՍ
Տպագր. Պաղտատլեան

Գինն է, Մարսէյլէն դուրս ղրկելով, 75 սանթիմ. Մարսէյլի մէջ 65 սանթիմ։

ՕՐԱՑՈՑՑ
1892
ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սեփականութիւն Ս. Փրկչի
Ազգային Հիւանդանոցին Հայոց
Տպագր. Պաղտատլեան ի Կ. Պոլիս

Կը ծախուի Ամերիկահի խմբագրատունը, 25 սանթիմ Մարսէյլի մէջ, 30 սանթիմ Մարսէյլէն դուրս, ղրկելու փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Ամերիկահի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին, ի միջի այլոց, և հետեւեալ գիրքերն որոց գիներն նշանակուած են, ղրկելու փոստի ծախքն ալ միասին սահմանելով։

Վ. Փափազեանց—Խաթ-Մաքս Հայ. բոչաների կեանքից) ,55 սնթմ.
Վ. Փափազեանց — Ճգնաւոր եղօ (Թիւրքահայերի կեանքից) ,35 սնթմ.
Շիրվանզատե — Գործակատարի յիշատակարանից (Մի պատկեր վաճառականական կեանքից) և Հրդեհ Նաթա-գործարանում (Բագուի մշակների կեանքից) 1 ֆրանք։
Գաբրիել եպ. Այվազեան—Աբեւն ու մոլորակները (Լսարան կենցաղագիտական գիտելեաց) ,35 սանթիմ.
Նոյն—Եգիպտոսի հնութիւնները ,35 սանթիմ.
Նոյն—Մեծն Ներսէս Հայրապետ 35 սանթիմ.
Մանկունի—Այրի վանք կամ Դեղարդայ վանք ,35 սանթիմ.
Վարդուկեան— Դալլալիկ (Գրաբար ոտանաւորներ՝ արարչագործութեան հրաշալիքներին վրայ) ,75 սնթմ.
Եզնիկ քահանայ Երզնկեացց—Ապացոյցն երդարան ձայնադրեալ հայկական ձայնանիշներով։ 2 ֆր. 80 սնթմ.
Ձայնագրեա եղգեցողութիւնք Ս. Պատարագի—Բ տպ. էջմիածին 10 ֆր.
Վ. Փափազեանց—Պատկերներ Թիւրքահայերի կեանքից (Հեղինակին 11 հատ ամենաընտիր վէպիկները). 4 ֆրանք։

Ասոնցմէ զատ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գարեգին Զարբհանէլեանի, Բաֆֆիի, Մեծենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և այլն. և այլն.։

Գրավաճառանոցի ժամերամոս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապես։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Խաւէրտեանց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ)։ Ա. հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներն անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին՝ 5 ֆր.։ (1 տոլար ամերիկեան)։

Նշանակ Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ վայրէն թղթի վրայ և կանաչ կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie dn Midi. et Papeterie Allées de Meilhan, 44.